# Նախընտրական

բիտրի» դերում:

ՀՌԱԿ սոցիալ-տնտեսական ծրագիրը, որի ամբողջական եւ մանրամասնյալ դրույթներին կարելի է ծանոթանալ առանձին (տես՝ «Ազգ», 11 ապրիլ, 20003 թ.), հետապնդում է հետեւյալ նպատակները.

**ա.** հետարդյունաբերական տնտեսությանն անցնելու նախադրյալների ձեւավորում եւ համաշխարհային տնտեսության գործընթացներին մասնակցելու պայմանների ապահովում.

**բ.** քաղաքացիների բարեկեցության կայուն աճի ապահովում.

**գ.** տնտեսական աճի առաջանցիկ այնպիսի տեմպերի ապահովում, որը գերազանցում է համաշխարհային տնտեսության աճի միջին տեմպերը, որպեսզի մինչեւ 2022 թ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը հավասարվի բարեկեցիկ երկրների համապատասխան մակարդակին.

**դ.** հայկական ապրանքների եւ ծառայությունների միջազգային մրցունակության ապահովում.

**ե.** միջին խավի ձեւավորում եւ ընդլայնում.

**զ.** մրցակցության ուժեղացում ներքին շուկայում.

**է.** երկրի տնտեսական անվտանգության ապահովում:

Վերոհիշյալ նպատակների իրականացումը ենթադրում է առաջանցիկ զարգացման հստակ ռազմավարություն եւ մեխանիզմներ, որոնք հատկանշվում են ոչ թե քանակական, այլ առաջին հերթին՝ որակական բնութագրիչներով: Առաջընթաց զարգացման տարրերն են՝ կառավարվող բաց շուկայական տնտեսությունը, ուժեղ դատաիրավական համակարգը, սեփականության իրավունքի պաշտպանությունը, մարդկային ռեսուրսների զարգացումը եւ մարդու աշխատանքային ու քաղաքական իրավունքների պաշտպանության համակարգի ստեղծումը, բարենպաստ ձեռնարկատիրական ու ներդրումային մթնոլորտը, բարձր տեխնոլոգիաների ու ինովացիոն ոլորտում իրականացվող լայնածավալ ներդրումները, տնտեսական աճը խթանող մակրոտնտեսական քաղաքականությունը, կառուցվածքային լայնածավալ փոփոխությունները, տնտեսության ենթակառույցների համապատասխանեցումը նոր պահանջներին, պետական ունեցվածքի արդյունավետ կառավարումը, ֆինանսական շուկաների եւ ինստիտուտների զարգացումը, հողի եւ այլ անշարժ գույքի շուկայի զարգացումը:

Այս բոլորը ենթադրում են համալիր մոտեցումներ ե՛ւ օրենսդրական դաշտում, ե՛ւ գործադիր ասպարեզում: Այնինչ մեր իրականության մեջ առկա է տվյալ պահի կամ իրավիճակի թելադրանքով կատարվող օրենսդրական նախաձեռնությունները գործադիր իշխանության կողմից, եւ խմբակային շահերի ու, ավելի վատ, պոպուլիստական նկատառումների թելադրանքով առաջ քաշվող օրինագծերը՝ Ազգային ժողովի կողմից: ՀՌԱԿ-ը պատրաստ է օրենսդրական գործունեության մեջ հեռանկարային համալիր մոտեցում հանդես բերելու ապագա Ազգային ժողովում:

Անցնող տարիների ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծումը դարձավ մեր պետության տնտեսական գլխավոր կարգախոսը: Եվ դա ճիշտ էր: Անուրանալի են այդ ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները, առավելապես շինարարության եւ ճանապարհաշինության բնագավառում: Սակայն հայտնի է նաեւ, որ որեւէ գործատուի խնդիրը աշխատատեղեր ստեղծելը չէ: Հետեւապես պետության խնդիրը պիտի լինի որքան հնարավոր է շատ ձեռներեցների ներգրավել արդյունաբերության, գյուղատնտեսության եւ սպասարկման տարբեր, նորանոր ոլորտներում, քան հույսը դնել եղածների ավելացման ու մեծացման վրա: Այդ ձեւով կլուծվի ոչ միայն ազգաբնակչության իրական զբաղվածության խնդիրը, այլեւ հասարակությունը եւ, ինչու չէ, պետությունը կձերբազատվեն, այսպես կոչված, օլիգարխների «անփոխարինելիության» բարդույթներից եւ մյուս անպատեհություններից:

Որքան հնարավոր է շատ ձեռներեցների ներգրավել տնտեսական ոլորտներում՝ նշանակում է ուղղակիորեն նպաստել մանր եւ միջին բիզնեսի զարգացմանը, հետեւապես՝ միջին խավի ձեւավորմանը: Իսկ միջին խավը որեւէ պետության ներքին կայունության, ռիսկից զերծ լինելու եւ օրինաչափ զարգացման գրավականն է: ՀՌԱԿ-ը իրեն համարում է միջին խավի քաղաքական ներկայացուցիչ եւ պաշտպան:

Համենայն դեպս, ՀՌԱԿ-ը լինելով ոչ միայն ազատական, այլեւ ռամկավարական-ժողովրդավարական կուսակցություն, գտնում է, որ ազատականությունն ու ռամկավարությունը թռչնի զույգ թեւերն են. առանց հասարակարգի ռամկավարացման, տնտեսական ազատականությունը չի կարող անհատի, հետեւապես հասարակության երջանկությանը ծառայել եւ, փոխադարձաբար, առանց տնտեսական ազատությունների, ժողովրդավարությունը չի կարող գիտակցված, գործնական մակարդակի լինել: ՀՌԱԿ-ն իր գլխավոր առաքելությունն է համարում Հայաստանում ազատ մտածող, իր եւ ուրիշների ազատությունը հարգող, պաշտպանող անհատների թիվը:

## 7. Սոցիալական

Պետության հիմքը ամուր միջին խավն է: Տնտեսական մեր նախաձեռնությունների մեծ մասը նպատակաուղղված է այդ խավի կայացմանն ու զարգացմանը, որի դեպքում միայն պետական բյուջեի հոգսերը կթեթեւանան, սոցիալական ոլորտի, առողջապահության ու կրթության մարզերի հատկացումները կդառնան որոշակի, հասցեագրված եւ նվազագույն իրական պահանջներին համապատասխան: Միայն ակտիվ սոցիալական քաղաքականության առկայության դեպքում կարելի է ապահովել տնտեսական բարեփոխումների կայունությունը, ձեւավորել բարենպաստ միջավայր տնտեսության առաջանցիկ զարգացման համար եւ պաշտպանել բնակչությունը սոցիալ-տնտեսական ռիսկերից:

ՀՌԱԿ-ի կողմից առաջարկվող սոցիալական քաղաքականությունը հիմնված է սոցիալական հատկացումների եւ նպաստների հասցեագրված մոդելի վրա, որը հակված կլինի առաջին հերթին դեպի բնակչության առավել կարիքավոր խմբերը: Այդ մոդելը ենթադրում է սոցիալական պարտավորությունների արդյունավետ վերաբաշխում պետության, ոչ առեւտրային (հասարակական-բարեգործական) ոլորտի եւ բիզնեսի՝ գործատուի միջեւ: Դրա համար անհրաժեշտ է կոնկրետ խնդիրների լուծման նպատակով համագործակցություն ստեղծել սոցիալական հիմնական խմբերի միջեւ, վերացնել պետական մենաշնորհը սոցիալական ոլորտում, ոչ պետական ոլորտին ներգրավել այս գործում:

Սոցիալական ապահովության ներկայիս քաղաքականության մեջ արդեն իսկ լայնորեն արտացոլված է ի հաշիվ ապահոված ընտանիքների սոցիալական տրանսֆերտների կրճատման՝ դեպի կարիքավոր ընտանիքներ սոցիալական եկամուտների վերաբաշխման սկզբունքը, ուստի անհրաժեշտ է դրա հետեւողական կիրառումը: Միաժամանակ, կարիքավոր եւ սոցիալապես խոցելի խավերին տրամադրվող պետական օգնության կողքին պետությունը, հասարակական տարբեր կազմակերպությունները պետք է ներդնեն ռեաբիլիտացիոն եւ ուսուցողական այնպիսի ծրագրեր, որոնք կաջակցեն այդ խավի տնտեսական ներուժի արդյունավորմանը, կխթանեն ինքնուրույն ջանքերով աղքատության հաղթահարմանը:

Մյուս կողմից, պետությունը պետք է հաստատի առողջապահության եւ կրթության ոլորտում անվճար (պետության կողմից փոխհատուցվող) ծառայությունների սահմանափակ անվանացուցակը բնակչության այն խավի համար, որն առանց պետության աջակցության չի կարողանա օգտվել այդ ոլորտների ծառայություններից:

Անհրաժեշտ է զբաղվածության կենտրոնների համակարգում իրականացնել բարեփոխումներ՝ գործազուրկների միայն հաշվառմամբ զբաղվող այդ կենտրոնները վերափոխելու գործազուրկների մասնագիտական ուսուցման եւ վերապատրաստման կենտրոնների, աշխատանք ապահովող հիմնարկների:

Ինչ վերաբերում է կենսաթոշակի խնդիրներին, ապա այստեղ առկա է անհամապատասխանություն աշխատավորներից գանձվող գումարների եւ կենսաթոշակի վճարման սակերի միջեւ, ինչը հավելյալ լուրջ պատճառ է դառնում, որպեսզի մարդիկ, գործատուները խուսափեն կենսաթոշակային ֆոնդին վճարումներ անելուց: Անհրաժեշտ է հետզհետե համապատասխանեցնել գանձվող եւ վճարվող գումարներն այս ոլորտում:

ՀՌԱԿ-ը պատրաստ է ոչ պոպուլիստական, այլ իրատեսական համալիր մոտեցում հանդես բերել սոցիալական զարգացման ոլորտի խնդիրներում, դրանց լուծմամբ պայմանավորելով հասարակության առողջությունը:

## 8. Առողջապահություն

Առողջապահական մասնավոր հիմնարկների զարգացման հետ մեկտեղ պետք է պահպանվեն պետական կարգավորման տարրերը եւ պետական հատկացումները: ՀՌԱԿ-ը առաջարկում է ոլորտի ֆինանսավորման բարեփոխումներ: Մասնավորապես՝ լրիվ անցնել ֆինանսավորման այնպիսի համակարգի, որի հիմքում ընկած կլինի անձի՝ բուժման կարիք ունեցող անհատի ֆինանսավորման սկզբունքը: Միաժամանակ գտնում ենք, որ պետական բուժհիմնարկներում պետք է անհապաղ վերջ տալ ձեւով պետական, գործնականում սեփական ներկա դրվածքին, որի արդյունքում հիվանդը կամ նրա հարազատները ծախսում են շատ ավելին, քան նախատեսված է բուժծառայությունների համար: Այդ երեւույթի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը մասնավոր բուժհիմնարկների թվի աճն է: Մյուս միջոցը՝ բժշկական ապահովագրական համակարգի կատարելագործումն է:

Մասնակի կամ պարտադիր ապահովագրման համար առաջին հերթին պետք է խթանել ավտոտրանսպորտի օգտագործմամբ երրորդ անձանց պատճառված վնասի դիմաց ապահովագրումը, վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների շահագործումից առաջացող վնասների դիմաց ապահովագրումը, ինչպես նաեւ հիմնարկ ձեռնարկությունների աշխատակիցների առողջությանը եւ կյանքին վնաս հասցնելու գործատուների պատասխանատվությունը:

## 9. Կրթություն

Հետարդյունաբերական համակարգում մարդկային կապիտալը դառնում է տնտեսական զարգացման գլխավոր գործոնը: Մարդկային ռեսուրսների որակը չափազանց կարեւոր է հատկապես Հայաստանի համար, քանի որ մեր երկիրը միշտ էլ ունեցել է բարձր կրթական եւ գիտական մակարդակ, մինչդեռ անցումային շրջանի անկումը սպառնում է նաեւ այս իմաստով խանգարել տնտեսության առաջանցիկ զարգացմանը: Բացի այդ, վերջին տարիներին տեխնոլոգիաների փոփոխման եւ զարգացման տեմպերը ցույց են տալիս, որ այս ոլորտում բացթողումները մոտակա 10 տարիներին կարող են բերել այնպիսի իրավիճակի, երբ Հայաստանը ոչ միայն չի կարող ունենալ սեփական տեխնոլոգիաների ստեղծման հնարավորություն, այլեւ չի կարողանա օգտագործել ներմուծված տեխնոլոգիաները մի պարզ պատճառով՝ չի լինի այդ տեխնոլոգիաներն օգտագործող որակյալ անձնակազմ:

Հաշվի առնելով այս բոլորը՝ անհրաժեշտ է պետական ֆինանսավորման սուղ միջոցները կենտրոնացնել գիտակրթական համակարգի կառուցվածքային փոփոխությունների իրականացման վրա, առաջին հերթին համապատասխանեցնելով դրանք նոր տեխնոլոգիաների պահանջներին, երկրորդ՝ կազմակերպելով եւ խրախուսելով արտասահմանյան բուհերում ուսանողների ուսուցումն ու կադրերի վերապատրաստումը, մասնագիտական կրթությունը համապատասխանեցնելով երկրի տնտեսական զարգացման հեռանկարային պահանջներին:

Դրան հասնելու համար պետք է օգտվել բնակչության պատրաստակամությունից: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ միջին հայաստանցին կրթական համակարգում պատրաստ է ներդնել մի քանի անգամ մեծ գումարներ, քան մեկ շնչին ընկնող հավասար կամ նույնիսկ ավելի բարձր եկամուտ ունեցող երկրների քաղաքացիները: Սա մեծագույն կապիտալ է, որը պետք է օգտագործվի արդյունավետ՝ առաջին հերթին բարձրացնելով տրվող կրթության մակարդակը, սկսած հանրակրթական դպրոցներից ու վերջացրած բարձրագույն կրթական հաստատություններով:

Այս ասպարեզում էլ ՀՌԱԿ-ը ձեռնունայն չի ներկայանում Ազգային ժողովի ընտրություններին: Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ ՀՌԱԿ-ը խնդիր է դրել առաջիկա ժամանակաշրջանում Հայաստանի բոլոր դպրոցներն օժտել համակարգչային դասարաններով:

## 10. Մշակույթ

Հայ մշակույթը հայ ժողովրդի հոգեւոր տարածքն է: Պատմական պայմանների եւ ազգային առանձնահատկությունների բերումով այդ տարածքը շատ ավելի ընդարձակ է, քան հայկական աշխարհագրական տարածքները: Պետական աջակցությամբ, հայաստանյան եւ սփյուռքյան հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների ջանքերով պետք է առավել ընդարձակել այդ տարածքը, առավել բացվել այլ մշակույթների առջեւ, մշակույթի բնագավառում տանել «ծավալապաշտական» քաղաքականություն, միաժամանակ պահպանելով հայոց մշակույթի եզակիությունը՝ հանդիսանալ արեւելյան ու եվրոպական մշակույթների միջեւ յուրօրինակ սինթեզ:

ՀՌԱԿ-ը չի ընդունում հարկային այն մոտեցումը, որ այժմ հանդես է բերվում արվեստի գործերի արտահանման, գրահրատարակչության, մշակութային օջախների գործունեության ասպարեզում: Նման հարկերից ու մաքսերից ստացվող գումարները շատ ավելի քիչ են, քան մշակույթի ասպարեզում պետբյուջեից ծախսված գումարները, հետեւապես ինքնաֆինանսավորման խթանման համար կարելի է մշակույթի ոլորտն ազատել հարկային նման բեռից եւ եղած սուղ միջոցներն օգտագործել երիտասարդության մշակութային դաստիարակության համար:

ՀՌԱԿ-ը միշտ էլ զորավիգ է եղել եւ զորավիգ կլինի իրեն ծնող ժողովրդի մտավոր եւ հոգեւոր կարողության, մեր ժողովրդի մշակույթի, կրթության եւ գիտության բարգավաճման գործին: Մենք համոզված ենք, որ մեր ժողովուրդն օժտված է հսկայական մտավոր ներուժով եւ ի վիճակի է ստեղծելու համաշխարհայինին համապատասխանող մտավոր եւ հոգեւոր նորանոր արժեքներ:

### Հարգելի ընտրող

**Նախորդ էջերում ծանոթանալով Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության գործունեության սկզբունքներին, հիշիր, որ եթե քեզ համար թանկ է քո ժողովրդի ազատ, անվտանգ, բարեկեցիկ եւ արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքը, քո ձայնը տուր Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության ընտրացուցակի օգտին: Դրանով իսկ դու կքվեարկես հանուն քո, զավակներիդ, հայրենակիցներիդ արժանապատիվ կյանքի, հանուն համահայկական մեր իղձերի իրականացման:**

